«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2016 թվականի

Գիտական խորհրդին կից համալսարանական հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2006 թվականի ապրիլի 4-ի «Ինստիտուտում հրատարակչական քաղաքականության մասին» որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին

Լսելով և քննարկելով **«Գիտական խորհրդին կից համալսարանական հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2006 թվականի ապրիլի 4-ի «Ինստիտուտում հրատարակչական քաղաքականության մասին» որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին»** հարցը (զեկուցող՝ ռեկտոր Կ.Լ.Աթոյան), հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության» կանոնադրության 18-րդ կետը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության» գիտական խորհրդի կանոնակարգի 29-36-րդ կետերը՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Ստեղծել գիտական խորհրդին կից համալսարանական հրատարակչական հանձնաժողով և հաստատել դրա կազմը.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը, գիտական կոչումը
1.	Աթոյան Կորյուն Լուկաշի (նախագահ)	ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2.	Մխիթարյան Խորեն Ալբերտի (քարտուղար)	գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3.	Աղաջանյան Հովսեփ Իվանի	տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

4.	Գրիգորյան Արմեն Վարդանի	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5.	Գրիգորյան Լիանա Հայկազի	կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
6.	Թավադյան Աշոտ Աղասու	տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
7.	Կարապետյան Միխաիլ Հովհաննեսի	վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր
8.	Մարգարյան Ատոմ Շավարշի	տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
9.	Վարդանյան Գագիկ Իշխանի	գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2. Հանձնաժողովի կազմի փոփոխության առաջարկի իրավունքը վերապահվում է ռեկտորին, հաստատումը՝ գիտական խորհրդին:

3. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2006 թվականի ապրիլի 4-ի «Ինստիտուտում հրատարակչական քաղաքականության մասին» որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

19.10.2016 թ.